



ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՆՊԱՏԱԿ

Ընկերությունը պարտավորվում է հետևել էթիկայի բաձրագույն նորմերին իր տնտեսական գործունեության իրականացման ընթացքում:

Սույն Քաղաքականության նպատակն է սահմանել կատարողական չափանիշներ՝ ապահովելու համար Ընկերության անձնակազմի և գործընկերների գործունեության համապատասխանությունը այն օրենքներին, կանոնակարգերին և միջազգային կոնվենցիաներին, որոնք վերաբերում են կոռուպցիային, զեղծարարությանը, հարկադրանքին, հանցավոր համաձայնությանը և խոչընդոտների հարուցմանը:

Աուդիտի հանձնաժողովը վերահսկում է սույն քաղաքականության հետ համախառնասխանությունը:

II. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Սույն Քաղաքականությունը կիրառվում է Ընկերության անձնակազմի այն անդամների և բիզնես գործընկերների նկատմամբ, ովքեր ներգրավված են Ընկերության համար կամ դրա անունից իրականացվող գործարքներում՝ իրենց գտնվելու վայրից անկախ, ինչպես նկարագրված է Լիդիանի Վարվեցողության կանոնագրքում:

III. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ա. *«Բիզնես գործընկերներ»* նշանակում է գործակալներ, ենթագործակալներ, խորհրդատուներ, ներկայացուցիչներ, կապալառուներ և մատակարարներ:

Բ. *«Ընկերություն»* նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը և նրա դուստր ընկերությունները:

Գ. *«Ընկերության անձնակազմ»* նշանակում է Ընկերության բոլոր տնօրենները, պաշտոնատար անձինք և աշխատողները:

Դ. «Համապատասխանության ապահովման պատասխանատու» նշանակում է Ընկերության Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված մեկ կամ ավելի ղեկավար անդամ կամ կոմիտեի կողմից նշանակված անձ, ում հասցեագրվում են հարցերը սույն Քաղաքականության շրջանակներում, և ով պետք է պատասխանի դրանց:

Ե. «Տնօրեն» նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության և նրա դուստր ընկերությունների տնօրենների խորհրդի անդամ:

Զ. «Օտարերկրյա պաշտոնյա» նշանակում է.

- 1) Այլ պետությունում օրենսդրական, վարչական կամ դատական պաշտոն զբաղեցնող անձ,
- 2) Արտասահմանյան պետության համար հանրային պարտականություններ կամ գործառույթներ իրականացնող անձ, այդ թվում՝ տվյալ երկրի անունից որևէ պարտականություն կամ գործառույթ իրականացնելու նպատակով հիմնված կամ դրանք իրականացնող վարչության, կորպորացիայի կամ այլ մարմնի կամ կազմակերպության համար աշխատող անձ, և
- 3) Երկու կամ ավելի պետությունների կամ կառավարությունների կամ երկու կամ ավելի միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից հիմնված միջազգային հասարակական կազմակերպությունների պաշտոնյա կամ գործակալ:

Սահմանումը ներառում է այլ պետությունում ընտրված որևէ ներկայացուցիչ, պետական պաշտոնյա կամ դատավոր, ինչպես նաև այնպիսի միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպիսինն է օրինակ՝ ՄԱԿ-ը: Այս սահմանումը չի հակասում ՏՀԶԿ-ի Կոնվենցիայի Հոդված 1.4-ում «օտարերկրյա պետական պաշտոնյա» սահմանմանը:

Ը. «ՏՀԶԿ» նշանակում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Արգելված գործունեություն

Բացառությամբ սույն Քաղաքականությամբ մասնավորապես նախատեսված դեպքերի, մնացած բոլոր դեպքերում Ընկերության անձնակազմը և բիզնես գործընկերները իրավասու չեն ուղղակի կամ անուղղակի կերպով՝

1. Այլ անձանց, այդ թվում՝ օտարերկրյա պաշտոնյաների գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ներգործելու նպատակով ներգրավվել կոռուպցիոն գործողություններում՝ որևէ արժեքավոր բան (վարկ, վարձատրություն, արտոնություն կամ որևէ այլ նյութական արժեք) առաջարկելու, տալու, ստանալու կամ որևէ բանի համար միջնորդելու եղանակով՝ (ա) ինչը կարող է դիտարկվել որպես վարձատրություն որևէ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար, կամ (բ) ինչը կատարվում է դրդելու համար որևէ պաշտոնատար անձին օգտագործել իր դիրքը արտասահմանյան պետական կամ միջազգային կազմակերպության գործողությունների կամ որոշումների վրա ներգործելու նպատակով: Նշվածը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

ա) Կաշառքը կամ դարձավճարները համարվում են կոռուպցիոն գործողություններ: Դարձավճարի օրինակ է հանդիսանում մատակարարի կողմից պայմանագիրը կնքելու դիմաց գումարների հարցերով մենեջերին որևէ գումարի վճարումը:

բ) Ընկերության համար ընդունելի չեն ընթացակարգերի դյուրացման համար կիրառվող վճարումները: Համապատասխանության ապահովման պատասխանատուին անհրաժեշտ է տեղյակ պահել ցանկացած նման վճարման մասին՝ նախքան նման գործարքի կնքումը այն գնահատելու նպատակով:

գ) Բարեխիղճ սոցիալական զարգացմանը, տեղական բարեգործությանը կամ Ծրագրի հետ առնչություն չունեցող ենթակառույցներին ուղղված ֆինանսավորումը չի կարող դիտարկվել որպես կոռուպցիոն գործողություն, եթե դա թույլատրվում է տեղական օրենքներով և ամբողջությամբ արտացոլվում է Ընկերության հաշվեմատյաններում ու գրանցամատյաններում:

դ) Միջազգայնորեն ընդունված չափանիշների համաձայն սովորական համարվող որևէ հյուրասիրություն կամ նվեր առաջարկելը, տալը, ստանալը կամ դրանց համար միջնորդելը, որոնք նշված չափանիշների համաձայն չեն կարող համարվել չափից ավելի՝ տվյալ անձի համապատասխան դերի հիման վրա, կոռուպցիոն գործողություն չեն հանդիսանում, եթե չեն խախտում որևէ կիրառելի օրենք:

ե) Օտարերկրյա պետական պաշտոնյաների հիմնավորված ճամփորդության և ժամանցի համար կատարվող վճարումները, որոնք չեն

հակասում համապատասխան օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով նախատեսվող գործող գործելակերպերին, չեն համարվում կոռուպցիոն գործողություններ,

զ) Վարկը, վարձատրությունը, արտոնությունն ու արժեքավոր իրերը չեն համարվում կաշառակերության փորձ, եթե

(ա) թույլատրելի կամ պարտադիր են այն պետության կամ միջազգային կազմակերպության օրենքների իմաստով, որոնց ենթարկվում է տվյալ օտարերկրյա պետական պաշտոնյան, կամ

(բ) կատարվել են տվյալ օտարերկրյա պետական պաշտոնյայի կողմից անձամբ կամ նրա անունից բարեխղճորեն կրած ողջամիտ ծախսերը վճարելու համար, եթե այդ ծախսերը ուղղակիորեն առնչվում են՝

(ա) տվյալ անձի ծառայությունների կամ արտադրանքի ցուցադրմանը, պարգաբանմանը կամ խթանմանը, կամ

(բ) տվյալ անձի և պաշտոնատար անձի համապատասխան արտասահմանյան երկրի միջև պայմանագրի կնքմանը կամ կատարմանը:

2) Ներգրավվել գեղծարարության մեջ տեղեկատվությունը թաքցնելու կամ այն աղավաղելու միջոցով, ինչը մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել որևէ կողմին և ինչը հանդիսանում է ֆինանսական կամ այլ օգուտ քաղելու կամ որևէ պարտավորությունից խուսափելու միջոց: Որևէ բացթողում կամ տեղեկատվության աղավաղում կարող է համարվել գերծարարություն, եթե այն թույլ է տրվել տեղեկատվության ճշմարտացի կամ կեղծ լինելու հանգամանքի նկատմամբ ցուցաբերված անփույթ անտարբերության հետևանքով: Ոչ դիտավորյալ անփութության հետևանքով թույլ տրված գուտ անճշտությունը չի որակվում որպես գեղծարարություն:

3) Ներգրավվել հարկադրանքի գործողություններում՝ վնաս պատճառելով որևէ կողմին կամ սպառնալով փչացնել կամ վնաս պատճառել որևէ կողմի գույքին՝ տվյալ կողմի գործողությունների վրա անպատշաճ կերպով ազդելու համար: Վերոնշյալը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

ա) Պետական գնումների և կառավարության հետ պայմանագրերի կնքման հետ կապված անարդար գնային առաջարկը հարկադրանքի օրինակ է հանդիսանում:

բ) Անիրավաչափ առավելություն ձեռք բերելու կամ որևէ պարտավորությունից խուսափելու նպատակով սպառնալը կամ

անօրինական գործողություններում ներգրավվելը, ինչպիսիք են՝ անձին պատճառվող վնասը, առևանգումը, գույքին կամ օրենքի ուժով ճանաչված շահին հասցվող վնասը, համարվում են հարկազրանք:

զ) Անզիջող սակարկությունը, օրենքով կամ պայմանագրով սահմանված իրավական պաշտպանության միջոցների կիրառումը կամ դատավարությունները հարկադրանք չեն համարվում:

4) Հանցավոր համաձայնության մեջ մտնելը՝ անօրինական նպատակով պայմանավորվածություն ձեռք բերելով, ներառյալ արևել այլ կողմի գործողությունների վրա անպատշաճ կերպով ազդեցություն գործելը: Օրինակ՝ պետական գնումների և կառավարության հետ պայմանագրերի կնքման հետ կապված անարդար գնային առաջարկ:

5. Խոչընդոտների հարուցման գործողություններում ներգրավվելը՝ միտումնավոր կերպով ոչնչացնելով, կեղծելով, փոփոխելով կամ թաքցնելով հետաքննության համար էական նշանակության փաստերը կամ ներկայացնելով հետաքննիչներին կեղծ հայտարարություններ՝ կոռուպցիոն գործողությունների, զեղծարարության, հարկադրանքի կամ հանցավոր համաձայնության մեղադրանքներով գործերի հետաքննությանը խոչընդոտելու նպատակով:

6. Ցանկացած անձ, ով Կանադայի տարածքից դուրս կատարում է որևէ արարք կամ բացթողում, որը Կանադայում կատարվելու դեպքում կհամարվեր իրավախախտում կետ 1 կամ 3-ի մասով, դավադրություն կամ իրավախախտման փորձ, կամ էլ ով մասնակցում կամ այլ կերպ ներգրավվում է վերոնշյալ գործողություններում, դիտարկվում է որպես անձ, ով կատարել է վերոնշյալ արարքը կամ բացթողումը Կանադայի տարածքում, եթե տվյալ անձը հանդիսանում է՝

(ա) Կանադային քաղաքացի,

(բ) Մշտական բնակիչ՝ Ներգաղթի և փախստականների պաշտպանության օրենքի ենթակետ 2 (1)-ի իմաստով, ով վերոնշյալ արարքը կատարելուց կամ բացթողումից հետո գտնվում է Կանադայում, կամ

(գ) Պետական մարմին, կորպորացիա, կազմակերպություն, ընկերություն, ֆիրմա կամ գործընկերություն, որը ձևավորվել, կազմավորվել կամ որևէ այլ կերպ ստեղծվել է Կանադայի կամ դրա որևէ նահանգի օրենքներով:

7. Պատժամիջոցների մասին օրենքների խախտում: Ընկերությունը և ընկերության անձնակազմը ենթարկվում է և պետք է հետևի պատժամիջոցների մասին միջազգային տարբեր օրենքների և նորմերի: Խոսքը հատկապես վերաբերում է ԱՄՆ-ի, Միացյալ

Թագավորության, Կանադայի և Եվրամիության կողմից Ռուսաստանի, Ուկրաինայի և Իրանի (սա ամբողջական ցանկը չէ) դեմ կիրառվող պատժամիջոցներին: Պատժամիջոցներ կիրառվում են նաև որոշ ցուցակների մեջ ընդգրկված անձանց դեմ: Ընկերության ողջ անձնակազմը, բոլոր կապալառուներն ու խորհրդատուները պետք է համագործակցեն Ընկերության պատժամիջոցների մոնիթորինգային գործունեությանը աջակցելու նպատակով, այդ թվում Ընկերության հավանական մատակարարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և լրացուցիչ տեղեկատվության հարցումների հետևողական իրականացման միջոցով: Ընկերության անձնակազմը, կապալառուներն ու խորհրդականները պետք է գերծ մնան այնպիսի գործարքներից և միջոցառումներից, որոնք կարող են համարվել պատժամիջոցների խախտում: Խախտումները հիմնականում ներառում են հետևյալ դեպքերը.

ա) ԱՄՆ քաղաքացու կողմից ապրանքների կամ ծառայությունների ուղղակի արտահանումը արգելված (Էմբարգո) երկիր կամ Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակում ընգրկված անձանց (SDN),

բ) Վերաարտահանումը արգելված (Էմբարգո) երկիր կամ Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակում ընգրկված անձանց՝ տեղյակ լինելով, որ վերջնական սպառողը վերոհիշյալ ցուցակում ընդգրկված անձ է կամ պատժամիջոցների տակ գնտվող երկիր: Փաստացիորեն, Պատժամիջոցների մասին օրենքի խախտումից խուսափելու համար Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակում ընգրկված անձանց կամ պատժամիջոցների տակ գնտվող երկրի հետ գործարքների գիտակցաբար հեշտացումը երրորդ կողմի միջոցով համարվում է հանցանք:

գ) Ապրանքների կամ ծառայությունների ներմուծումը Հատուկ կատեգորիայի անձանց և արգելված անձանց ցուցակում ընգրկված անձանցից կամ պատժամիջոցների տակ գտնվող երկրից,

դ) Արգելված ապրանքների կամ ծառայությունների հետ գործ ունենալը, այդ թվում՝

- (1) թմրանյութերի շրջանառում
- (2) զանգվածային ոչնչացման զենքեր/ տարածման կանխարգելում
- (3) ահաբեկչություն
- (4) կիբեր **հանցագործություններ**
- (5) անմշակ ադամանդների վաճառք
- (6) բազմազգային հանցավոր կազմակերպություններ

ե) Արգելված գործարքներից խուսափումը դրանց «ոյուրացման» միջոցով,

զ) «Սառեցված գույքի» կամ «պատժամիջոցների տակ գտնվող անձի» հետ գործ ունենալը:

Հնարավոր պատժամիջոցների տակ գտնվող ընկերությունների կամ անձանց հետ համագործակցության վերաբերյալ կասկածների կամ տեղեկությունների մասին անհրաժեշտ է անմիջապես հայտնել Պահանջների համապատասխանության

ապահովման պատասխանատուին կամ նրա կողմից նշանակված անձին: Պահանջների համապատասխանության ապահովման պատասխանատուն պետք է խորհրդակցի իրավաբանի հետ ըստ անհրաժեշտության, և ողջ անձնակազմը պետք է հնարավորինս աջակցի խնդրի լուծմանը:

Բ. Բիզնես գործընկերների հետ գործարքներում անհրաժեշտ զգուշավորություն

Կոռուպցիոն գործողություններին առնչվող կիրառելի օրենքներին համապատասխանելու համար Ընկերությունը պետք է բիզնես գործընկերների հետ գործարքներում անհրաժեշտ զգուշավորություն ցուցաբերի: Ընկերությունը կարող է պատասխանատվություն կրել իր Բիզնես գործընկերների գործողությունների համար, և այդ ռիսկը կարող է զգալի լինել այն երկրներում, որտեղ անօրինական վճարումները լայն տարածում ունեն: Ընկերության կողմից պատշաճ **զգուշավորության դրսևորումը** ենթադրում է, որ այն պետք է ռիսկի գնահատման մոտեցում կիրառի, առավել ևս՝ ավելի մեծ ռիսկ ներկայացնող բիզնես գործընկերների հետ գործողություններում իրականացնելով այդ գործընկերների ֆինանսական և իրավաբանական գնահատում:

Ինչ վերաբերում է ապագա բիզնես գործընկերներին, ապա որևէ բիզնես գործընկերոջ հետ գործարք կնքելիս Ընկերությունը պետք է իրականացնի անհրաժեշտ իրավական և ֆինանսական գնահատում: Սովորաբար, Ընկերությունը պետք է բիզնես գործընկերոջից սույն Քաղաքականության հետ համապատասխանության պայմանագրային հավաստիացումներ կամ երաշխիքներ պահանջի: Եթե որևէ ապագա բիզնես գործընկեր չի համաձայնում այդ պայմաններին, այդ հարցը պետք է ներկայացվի Պահանջների համապատասխանության ապահովման պատասխանատուի դիտարկմանը: Բացառությունները հնարավոր են այն դեպքերում, երբ որևէ ապագա բիզնես գործընկեր ունի ընդունելի հակակոռուպցիոն քաղաքականություն:

Դ. Հաշվեմատյաններ և գրանցամատյաններ

Բացի այն, որ բոլոր հանգամանքներում անհրաժեշտ է հետևել Ընկերության ստանդարտ հաշվապահական կանոններին և ընթացակարգերին, անհրաժեշտ է հատուկ զգուշավորություն ցուցաբերել օտարերկրյա պաշտոնյաների համար վճարումներ ներառող գործարքներում: Օտարերկրյա պաշտոնյաներին բոլոր վճարումների վերաբերյալ անհրաժեշտ է ժամանակին և կանոնավոր կերպով հաշվետվություն ներկայացնել Պահանջների համապատասխանության ապահովման պատասխանատուին: Աշխատողները պարտավոր են այդ վճարումների վերաբերյալ ներկայացնեն լիարժեք և ճշգրիտ հաշվետվություններ: Ընկերության հաշվեմատյաններում ու գրանցամատյաններում մոլորեցնող, ոչ ամբողջական կամ կեղծ գրանցումներ կատարելն արգելվում է:

Իրավախախտում են համարվում այն դեպքերը, երբ անձը իր գործունեության համար

որևէ արտոնություն ստանալու կամ պահպանելու համար օտարերկրյա պետական պաշտոնյային կաշառելու կամ այդ կաշառքը թաքցնելու նպատակով՝

1. վարում կամ կատարում է գրանցումներ, որոնք գործող հաշվապահական և աուդիտորական չափանիշներին համապատասխան ձևով արտացոլված չեն հաշվապահական գրքերում կամ այլ գրանցամատյաններում,
2. կատարում է գործարքներ, որոնք չեն արտացոլվում վերոնշյալ գրքերում կամ գրանցամատյաններում կամ որոնք պատշաճ ձևով արտացոլված չեն,
3. վերոնշյալ գրքերում և գրանցամատյաններում կատարում է անիրական ծախսերի վերաբերյալ գրանցումներ,
4. հաշվապահական գրքերում և գրանցամատյաններում գրանցում է պարտավորություններ, որոնք վերաբերում են այլ օբյեկտներին,
5. գիտակցաբար օգտագործում է կեղծ փաստաթղթեր, կամ
6. միտումնավոր և օրենքով սահմանված ժամկետից շուտ ոչնչացնում է հաշվապահական գրքերն ու գրանցամատյանները:

7. Օտարերկրյա պետական պաշտոնյաների կաշառման դեմ պայքարի մասին օրենքի պահանջների կատարում

Կանադայում գործող Օտարերկրյա պետական պաշտոնյաների կաշառման դեմ պայքարի մասին օրենքի /ՕՊՊԿՊՕ/**CFPOA**/ վերջին փոփոխությունների ու կիրառկման միջոցների ավելացման արդյունքում խստացվել են ընկերությունների կողմից հակակոռուպցիոն պահանջների կատարման պահանջները: Չնայած որ Կանադայի կառավարության կողմից սահմանված չեն վերոնշյալ պահանջների կատարման կոնկրետ պահանջներ, այնուամենայնիվ Արտասահմանում կաշառակերության դեմ պայքարի մասին ԱՄՆ օրենքին ու Կաշառակերության վերաբերյալ օրենքին առկա նմանությունները ենթադրում են որոշակի ուղեցույցներ կաշառակերության դեպքերի բացառման առումով: Ստորև ներկայացված են վերոնշյալ պահանջների կատարման հիմնական նպատակները.

- Մշակել կորպորատիվ քաղաքականություն ՕՊՊԿՊՕ-ի խախտումների վերացման նպատակով,
- Ընկերության բոլոր օղակներում ձևավորել հստակ մթնոլորտ ընկերության կողմից որդեգրված քաղաքականության հետ կապված,
- Մշակել համապատասխանության չափորոշիչներ, որոնք ուղղված են տարբեր իրավախախտումների, հակակոռուպցիոն օրենքների կամ ընկերության սեփական չափանիշների խախտման ռիսկի կրճատմանը: Սա կարող է լինել նաև խիստ վարվելականոնների սահմանման ձևով,
- Համապատասխանության վերահսկման պարտականությունը պետք է տրվի մեկ կամ ավելի բարձրաստիճան ղեկավարներին,
- Անհրաժեշտ է ապահովել համապատասխան ֆինանսական և հաշվապահական, այդ թվում՝ ներքին վերահսկման ընթացակարգերի

առկայություն,

- Բոլոր աշխատողների համար անհրաժեշտ է նախատեսել հաղորդակցման, ուղղորդման և վերապատրաստման ծրագրեր,
- Երրորդ կողմ հանդիսացող բոլոր անձանց, ինչպիսիք են՝ գործակալներն ու բիզնես գործընկերները, համար սահմանել նախնական ստուգման և համապատասխանության որոշման պահանջներ,
- Համապատասխանության ընթացակարգերի պարբերական ստուգում և փորձարկում:

1. Կաշառակերության մասին դրույթ

Իրավախախտում է համարվում այն դեպքը, երբ անձը որևէ առավելություն ստանալու կամ պահպանելու նպատակով օտարերկրյա պետական պաշտոնյային կամ որևէ այլ անձին տալիս, առաջարկում կամ համաձայնում է տալ կամ առաջարկել որևէ արժեքավոր իր՝ (ա) որպես վարձատրություն որևէ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում որևէ գործողություն կատարելու համար, կամ (բ) ինչը կատարվում է դրդելու համար որևէ պաշտոնատար անձին օգտվել իր դիրքից օտարերկրյա պետական կամ միջազգային կազմակերպության գործողությունների կամ որոշումների վրա ներգործելու նպատակով:

ՕՊՊԿՊՕ-ն կիրառելի է այն օտարերկրյա պետական պաշտոնյաների կաշառման դեպքերում, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են Կանադայի տարածքում: Վերոնշյալ օրենքի դրույթները կիրառելի են նաև այն դեպքերում, երբ իրավախախտումը կատարվել է Կանադայի տարածքից դուրս Կանադայի քաղաքացի, մշտական բնակիչ հանդիսացող կամ Կանադայի օրենքներով կազմավորված որևէ իրավաբանական անձի կողմից: «Բիզնես» եզրույթը վերաբերում է ամեն տեսակի բիզնեսներին, այլ ոչ միայն «շահույթ ստանալու նպատակով» ստեղծված ընկերություններին: Կանադան հայտարարել է ընթացակարգերի դյուրացման վճարները վերացնելու մտադրության մասին, սակայն այդ փոփոխության կիրառման որևէ կոնկրետ ամսաթվեր դեռևս հրապարակված չեն:

2. Մեղմացնող հանգամանքներ

ա) Վճարներն ընդունելի են, եթե դրանք «թույլատրելի են կամ պարտադիր են տվյալ արտասահմանյան երկրի կամ միջազգային կազմակերպության օրենքների համաձայն»:

բ) Վճարները թույլատրելի են, եթե դրանք հանդիսանում են արդարացված ծախս գործնական հարաբերությունների ձևավորման իմաստով (օր՝ արտասահմանյան երկրի կառավարության հետ պայմանագրային պարտականությունների կատարման կամ արտադրանքի ցուցադրման,

խթանման, պարզաբանման նպատակով, բացառությամբ զվարճանքների):

զ) Վճարումները թույլատրելի են պետական մարմինների կողմից իրենց բնորոշ գործառնությունների (թույլտվությունների ստացում, պետական փաստաթղթերի պատրաստում, ուստիկանության պաշտպանություն, փոստային և կոմունալ ծառայություններ) կատարումն արագացնելու նպատակով:

3. Կանադական հանքարդյունաբերության վրա ակնկալվող ազդեցություն

Կանադական հանքարդյունաբերական ընկերությունները, ինչպես նաև արտասահմանում գործունեություն իրականացնող Կանադայի քաղաքացիները պետք է հետևողական լինեն հակակոռուպցիոն օրենքների խստացված կիրառման հետ կապված: Դյուրացման վճարների հետագա չեղարկումը ենթադրում է մեծ ռիսկեր և անորոշություն օտարերկրյա պաշտոնյաների հետ առնչվող կանադական ընկերությունների համար: Հետևաբար, ընկերությունների ներքին վերահսկման ընթացակարգերում համապատասխան փոփոխությունների կատարումն ու դրանց արտացոլումը համապատասխանության ծրագրերում և ընթացակարգերում, ինչպես նաև աշխատողների և կանադական ընկերությունների անունից հանդես եկող գործակալների ու միջնորդների իրազեկումը այդ նոր իրողության մասին համարվում են առաջնահերթ խնդիր: Կանադական բնակավայրերում վերջերս կիրառված մեծ տուգանքները, ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելու մտադրությունն ու Կանադական ուստիկանության կողմից հարուցված մոտ 60 գործերը խոսում են այն մասին, որ նման հարցերը գտնվում են իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում: Վերոնշյալ նախագուշացումներն անտեսող կանադական ընկերությունները գործում են սեփական ռիսկով:

Ե. Խախտումներ և կիրարկում, այդ թվում՝ ՕՊՊԿՊՕ

Սույն քաղաքականությանը վերաբերող պարզաբանումներն անհրաժեշտ է ներկայացնել ձեր ղեկավարի և/կամ Պահանջների համապատասխանության ապահովման պատասխանատուի ուշադրությանը: Ընկերության աշխատակազմը կամ բիզնես գործընկերները պարտավոր են անհապաղ զեկուցել սույն Քաղաքականության ցանկացած հնարավոր խախտման մասին: Եթե ցանկանում եք դա անել անանուն կերպով, կարող եք Պահանջների համապատասխանության ապահովման պատասխանատուի հետ հաղորդակցվել գաղտնի կամ, անհրաժեշտության դեպքում, Ընկերության ահազանգման քաղաքականությամբ սահմանված կարգով: Ընկերությունը իրավասու չէ դադարեցնել որևէ անձի պայմանագիրը, իջեցնել նրա պաշտոնը, պաշտոնից ժամանակավորապես հեռացնել, սպառնալ, հետապնդել նրան կամ որևէ կերպ խտրականություն ցուցաբերել նրա նկատմամբ՝ սույն Քաղաքականության հետ համապատասխանությանն առնչվող մտահոգությունների մասին նրա կողմից բարեխղճորեն զեկուցելու հետ կապված որևէ օրինական գործողության հիման վրա:

Ընկերության անձնակազմի որևէ անդամ, ով կխախտի սույն Քաղաքականությունը, կարող է Ընկերության կողմից կարգապահական տույժի ենթարկվել՝ ընդհուպ մինչև աշխատանքից հիմնավորված ազատում կամ իրավական նորմերի ու նորմատիվների համաձայն այլ հետևանքներ, որոնք կարող են հանգեցնել ըստ օրենքի քաղաքացիական կամ քրեական գործ հարուցելուն: Նման մեղադրանքները կարող են հանգեցնել քրեական պատասխանատվության և մինչև 14 տարի ազատազրկման հնարավորության:

Եթե անձը մեղադրվում է Կանադայի տարածքում ենթակետ Ա (5)-ով նախատեսված որևէ արարք կամ բացթողում կատարելու մեջ, ապա դրա հետ կապված վարույթը կարող է իրականացվել Կանադայի ցանկացած տարածքային միավորումում՝ Կանադայի տարածքում տվյալ անձի գտնվելու փաստից անկախ: Տվյալ անձի նկատմամբ դատավարությունն ու նրա նկատմամբ պատժի սահմանումը կատարվում է այնպես, ինչպես որ կկատարվեր, եթե տվյալ իրավախախտումը տեղի ունենար տվյալ տարածքային միավորման տարածքում:

Պարզաբանելու համար նշենք, որ դատավարության համար մեղադրյալի ներկայանալուն և ներկա լինելուն, ինչպես նաև դրանց հետ կապված բացառություններին վերաբերող Քրեական օրենսգրքի դրույթները կիրառելի են վերոնշյալ ցանկացած տարածքային միավորումներում նախաձեռնված վարույթների համար:

Եթե անձը մեղադրվում է Կանադայի տարածքում ենթակետ Ա (5)-ով նախատեսված որևէ արարք կամ բացթողում կատարելու մեջ, որոնց քննությունը կատարվել է Կանադայի տարածքից դուրս նույն այն ձևով, ինչպես որ կկատարվեր Կանադայում, ապա նա կարող է հայտարարել այդ արարքի համար արդեն դատապարտված կամ արդեն արդարացված լինելու մասին կամ ներում հայցել:

Վերոգրյալից անկախ, անձը չի կարող հայտնել նախկինում դատապարտված լինելու մասին այնպիսի հողվածով, որը փոխում է տվյալ արարքի կամ բացթողման հետ կապված մեղադրանքը, եթե

- Տվյալ անձը ներկա չի գտնվել և ներկայացված չի եղել իր հրահանգով գործող պաշտպանի կողմից Կանադայի տարածքից դուրս տեղի ունեցած դատավարության ընթացքում, և
- Տվյալ անձը չի կրել իր պատիժը տվյալ արարքի կամ բացթողման հետ կապված մեղադրանքով կայացված վճռով:

Վերոգրյալը հաստատվել է Տնօրենների խորհրդի կողմից 2018թ. օգոստոսի 14-ին: